



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-06-02 (Tel./Fax), cs@ysu.am, www.ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°3

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 10.11.2015 ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻՑ

Օրակարգ

1. Դեկանի հաշվետվություն:
2. Ընթացիկ հարցեր:

1-ին հարցի վերաբերյալ

Լսեցին՝ Դեկան Վ. Դումանյանը ներկայացրեց 2014-2015 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը: Ֆակուլտետը սովել է առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատի, առկա ուսուցմամբ մագիստրատուրայի շրջանավարտներ: Ֆակուլտետը ունեցել է աննախադեպ ընդունելություն: Առաջին կուրս են ընդունվել 250 ուսանող (200-ը ԻԿՄ մասնագիտությամբ, 50-ը՝ ՄՀԳ): Ֆակուլտետը հաջորդ ուսումնական տարում նախատեսում է ընդունելություն նոր մասնագիտությամբ, ուստի կազմվել է նոր ուսումնական պլան «Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտության համար:

Արտակրթական գործունեության վերաբերյալ դեկանը նշեց, որ որոշակի առաջընթաց կա ուսանողական օլիպիադաներին ֆակուլտետի ուսանողների մասնակցության գործում: Կազմակերպվում են ուսանողական գիտական սեմինարներ: Կարևոր իրադարձություն էր երկու նոր համակարգչային լսարանների կահավորումը: Ամբիոնների գիտական

գործունեությունը ընթանում է բնականոն ձևով: Լուծարքների կազմակերպման վերաբերյալ դեկանը նշեց, որ անհրաժեշտ է բարձրացնել ուսանողների իրազեկվածության մակարդակը: Լսարանների քանակը ակնհայտորեն քիչ է և այդ պատճառով չորրորդ կուրսը անցել է երկրորդ հերթ և այդ առիթով որոշակի դժգոհություններ են եղել ուսանողության կողմից:

Խնդիրներ կան հեռակա ուսուցման բնագավառում: Հեռակա ուսուցմամբ ուսանողների հետ պետք է ավելի սերտ կոնտակտներ ստեղծել, որպեսզի նրանք դառնան ֆակուլտետի լիիրավ անդամներ: Դեկանատի աշխատանքի վերաբերյալ նշվեց, որ պետք է փոփոխվեն աշխատանքային գործիքները: Որոշակի խնդիրներ կան կապված ուսումնա-օժանդակ և պրոֆեսորա-դասախոսական կազմերի հետ:

Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ Ս. Նիզիյանը իր ելույթում նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են որոշակի քայլեր: Ողջունելի է համագործակցությունը ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտի «Հայկական Ծրագրեր» ընկերության հետ: Ֆակուլտետում աշխատանքային մթնոլորտ է:

Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ Յու. Հակոբյանը իր ելույթում նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է մեծ ծավալի աշխատանք և դեկանի աշխատանքը կարելի է գնահատել դրական:

ԵՊՀ պրոռեկտոր Գ. Գևորգյանը իր ելույթում նշեց, որ ֆակուլտետը զգալի առաջընթաց է արձանագրել ծրագրավորման ուսանողական օլիմպիադաներում ձեռք բերված արդյունքներով: Երկու նոր համակարգչային լսարանների կահավորումը կարևոր է, սակայն անելիքներ դեռ կան ուսումնական գործընթացների համար նորմալ պայմանների ապահովման գործում: ԵՊՀ ռեկտորի նախաձեռնությամբ ֆակուլտետը մշակել է գործողությունների ծրագիր: Լուծարքների կազմակերպման գործընթացը ամբողջովին կանոնակարգված չէ, որը կարող է տեղիք տալ որոշ դժգոհությունների:

Պրոռեկտոր Գ. Գևորգյանը հաշվետու ժամանակում կատարված աշխատանքը գնահատեց դրական:

Որոշեցին՝ Դեկանի հաշվետվությունը ընդունել ի գիտություն:

2-րդ հարցի վերաբերյալ

Լսեցին – Ա.01.09 «Մաթեմատիկական կիրառական և մաթեմատիկական տրամաբանություն» մասնագիտությամբ առկա ուսուցմամբ ասպիրանտ Արման Ճիտոյանի ատենախոսության թեմայի անվանման և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել Արման Ճիտոյանի ատենախոսության թեմայի անվանումը «Տրամաբանական որոշ համակարգերում արտածումների բարդության գնահատականների ճշգրտում»: Գիտական ղեկավար նշանակել ֆ.մ.գ.դ. Ա. Չուբարյանին:

Լսեցին – Ա.01.09 «Մաթեմատիկական կիրառական և մաթեմատիկական տրամաբանություն» մասնագիտությամբ առկա ուսուցմամբ ասպիրանտ Աշոտ Մինասյանի ատենախոսության թեմայի անվանման և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել Աշոտ Մինասյանի ատենախոսության թեմայի անվանումը «Գծայնացվող ծածկույթներ վերջավոր դաշտերում»: Գիտական ղեկավար նշանակել ֆ.մ.գ.դ. Ա. Ալեքսանյանին:

Լսեցին – Ե.13.04 «Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում» մասնագիտությամբ առկա ուսուցմամբ ասպիրանտ Ռուբեն Աղաջանյանի ատենախոսության թեմայի անվանման և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել Ռուբեն Աղաջանյանի ատենախոսության թեմայի անվանումը «Ստոխաստիկ հաշվարկների միջոցով բարդ համակարգերի մոդելավորում»: Գիտական ղեկավար նշանակել ֆ.մ.գ.դ. Ս. Նիգիյանին:

Լսեցին – Ե.13.04 «Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում» մասնագիտությամբ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի հայցորդ Անի Քոչարյանի ատենախոսության թեմայի անվանման և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել Անի Քոչարյանի ատենախոսության թեմայի անվանումը «Ծրագրային համակարգ՝ բլոկ-հիերարխիկ ցանցերի որոշ տոպոլոգիական բնութագրիչների վերլուծության համար»: Գիտական ղեկավար նշանակել ֆ.մ.գ.դ. Ս. Նիգիյանին:

Լսեցին - «Ծրագրավորում և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ » ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Անի Բալասանյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին _ Անի Բալասանյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2014-15 ուսումնական տարում:

Լսեցին` - «Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում » ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Վահագն Բայրամյանի ատեստավորման հարցը (ղեկավար Հ. Հակոբյան):

Որոշեցին` Վահագն Բայրամյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2014-15 ուսումնական տարում:

Լսեցին` - «Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում » ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սոֆիկ Թորոյանի ատեստավորման հարցը (ղեկավար Հ. Հակոբյան):

Որոշեցին` Սոֆիկ Թորոյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2014-15 ուսումնական տարում:

Լսեցին - «Ծրագրավորում և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ » ամբիոնի հայցորդ Անի Քոչարյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին _ Անի Քոչարյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2014-15 ուսումնական տարում:

Լսեցին – Ա.01.09 «Մաթեմատիկական կիրառելի և մաթեմատիկական տրամաբանություն» մասնագիտությամբ առկա ուսուցմամբ ասպիրանտ Դավիթ Դանոյանի մասնագիտության դասիչի, ատենախոսության թեմայի փոփոխության հարցը:

Որոշեցին – Հաստատել Դ. Դանոյանի ատենախոսության թեմայի անվանումը «Անվտանգ բազմամասնակից հաշվարկներ հիմնված նոր անտեղյակ փոխանցման հաղորդակարգի վրա», մասնագիտության դասիչը՝ Ե.13.05: Գիտական ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Գ. Խաչատրյան:

Գիտական խորհրդի նախագահ

Վ. Դումանյան

Գիտական խորհրդի քարտուղար

Է. Դանոյան